ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 83-Ա
14 ՀՈՒԼԻՍԻ 2020թ.

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 1544-Ն որոշման և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Կապան համայնքի՝ շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2021 թվականի ծրագիրը՝ ընդհանուր 44522,90 հազար դրամ արժողությամբ, այդ թվում՝ բնապահպանական միջոցառումների մասով – 37022,9 հազար դրամ և առողջապահական միջոցառումների մասով – 7500,0 հազար դրամ, համաձայն հավելվածի:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաստատված ծրագիրը ներկայացնել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր պետական մարմնի միջոցով 2021 թվականի պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:

Կողմ(8)՝

ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ
ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ
ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2020թ. հուլիսի 14
ք. Կապան

Հաստատված
Կապան համայնքի ավագանու
« 14 » հուլիսի թիվ 83-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԵՎ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ

ԿԱՊԱՆ – 2020

ՆԱԽԱԲԱՆ

Կապան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2021 թ. ծրագիրը կազմվել է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկերի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի /ՀՕ-188, 15.05.2001թ./, ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առաջարկվող բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունը և դրանց ֆինանսավորման համամասնությունները ՀՀ Բնապահպանության նախարարության ու ՀՀ Առողջապահության նախարարության հետ համաձայնեցնելու կարգը հաստատելու մասին» N 1544-Ն և 2014 թվականի փետրվարի 27-ի «Բնապահպանական ծրագրերի մշակման (նախագծման) կարգը հաստատելու մասին» N 197-Ն որոշումների պահանջներին համապատասխան:

Նախատեսվող ծրագրի խնդիրները, նպատակները և կենսագործման անհրաժեշտությունը՝

Կապանը Հայաստանի Հանրապետության լեռնահանքային արդյունաբերական կենտրոններից մեկն է: Պղնձի և բազմամետաղային հանքավայրի երկարամյա շահագործումը, շրջակա տարածքներում իրականացված և իրականացվող երկրաբանահետախուզական աշխատանքները, խոշոր պոչամբարների առկայությունը, հին հանքախորշերի փլուզման վտանգները, սողանքային ակտիվությունը, ժամանակին կատարված տարածքի անտառների անկանոն հատումները, քաղաքի միջով անցնող և խոշոր բեռնատարների երթևեկությամբ ծանրաբեռնված միջազգային ավտոմայրուղին քաղաքի բնության և բնակչության առողջության համար էկոլոգիական մեծ ռիսկեր են պարունակում:

Կապանի միջով հոսող Վաչագան գետը սկիզբ է առնում Խուստուփ լեռան հյուսիս-արևելյան լանջերից: Վաչագան գետի երկարությունը 11 կմ է:

Գետը հոսում է հենց քաղաքի կենտրոնով, և թվում է, թե հենց դրանով ապահովված կլինի քաղաքի յուրահատուկ գեղեցիկ տեսքը, սակայն գետը լցված աղբը, քարերն ու ավազը այլ տեսարան են ստեղծում:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ շրջակա միջավայրի տեղական և տարածաշրջանային աղտոտվածության դեմ պայքարը, որը ներառում է ջրային ռեսուրսների պահպանության աշխատանքներ և միջոցառումներ, համայնքը նախատեսում է 2021 թվականին Կապան քաղաքով հոսող Վաչագան գետի վրա կառուցել ջրավազան, որտեղ կհավաքվեն գետի բերած աղբը, քարերը, ավազն ու ճյուղերը՝ հունի հետագա աղտոտումն ու բարձրացումը կանխելու համար:

Ջրավազանը նախատեսվում է կառուցել Կապանի Գարեգին Նժդեհ հուշահամալիրից ներքև գտնվող կամրջի հարևանությամբ: Նույն գետի վրա՝ նշված տարածքից մոտ 1 կմ վերև, արդեն իսկ առկա է ջրավազան, որտեղ հիմնականում կուտակվում է մինչ այդ հատվածի քարերն ու ավազը: Այս արդեն իսկ կառուցված ջրավազանի միջոցով հնարավորինս նվազեցվում է վարարումների խնդիրը, սակայն չի լուծվում գետի աղտոտման խնդիրը, քանի որ այն հիմնականում աղտոտվում է դրանից ներքև ընկած հատվածներում:

Կառուցված ջրավազանից մինչև այն հատված, որտեղ համայնքը նախատեսում է բնապահպանական ծրագրով կառուցել նոր ջրավազան, գտնվում են այգիներ, որտեղ բնակիչները հաճախ նաև հավաքույթներ են կազմակերպում, ինչպես նաև այստեղ է գտնվում բացօթյա լողավազան, որտեղ շատ են լինում այցելուներ, և իհարկե, Նժդեհի հուշահամալիրը, որը կապանցիների և հյուրերի սիրելի վայրերից մեկն է, և հենց այդ հատվածից է սկսվում գետի աղտոտումը:

Նախատեսվող ջրավազանի վրա կտեղադրվի նաև ցանց, որտեղ կկուտակվի աղբը և պարբերաբար կհեռացվի «Կապանի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի միջոցով:

Ջրավազանի պատվարի վրա կլինեն 3 հարթ փականներ՝ յուրաքանչյուրը Φ=1000 ջրի թողարկներով, ավելցուկային ջրի հեռացման ջրթող և ձկնուղի: Ջրավազանի տարողունակությունը՝ ≈ 1200 մ³ :

Հետագայում համայնքը նախատեսում է կրկին անգամ ամբողջությամբ մաքրել Վաչագան գետը, վերակազմել երբեմնի ջրային հայելիները և քաղաքի գեղեցիկ տեսքը: Գետը մաքրելուց հետո, երբ արդեն այգիների և լողավազանի տարածքից հունի մեջ թափվող աղբը, քարերը, ավազը և ճյուղերը չեն աղտոտի գետի հունը, կոմունալ ծառայության կողմից պարբերաբար մաքրության աշխատանքներ իրականացնելով հնարավոր կլինի մաքուր պահել գետը և անհրաժեշտություն չի առաջանա հսկայական գումարներ ծախսել ծանր տեխնիկայով այն մաքրելու համար, ինչը նաև լավ կանդրադառնա գետի կենսաբազմազանության վրա:

Այսինքն, Կապան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2021 թվականի ծրագրի բնապահպանական մասի խնդիրը Վաչագան գետի ներկայիս աղտոտված վիճակն է: Ներկայիս վիճակը շտկելու, գետը մաքրելու և մաքուր տեսքը պահպանելու նպատակով համայնքը նախատեսում է Վաչագան գետի վրա կառուցել ջրավազան:

Կապան համայնքի Արծվանիկ բնակավայրը խոշորացված համայնքի մեծ և աճող գյուղերից է: Եթե 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ Արծվանիկ բնակավայրում հաշվառված բնակչության թիվը 600 էր, 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ Արծվանիկի հաշվառված բնակչության թիվը արդեն 658 է: Այն գտնվում է մարզկենտրոնից 14 կմ հեռավորության՝ Մ2 միջպետական ճանապարհի վրա: Այստեղ է գտնվում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ –ի պոչամբարը, որը հայտնի է որպես Արծվանիկի պոչամբար: Գյուղում գործում է դպրոց և նախադպրոցական ուսումնական հաստատություն:

Կապան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2021 թվականի ծրագրի առողջապահության մասի միջոցառումների շրջանակում համայնքը նախատեսում է վերանորոգել Արծվանիկ բնակավայրի բուժկետը: Գյուղի հիմնական բուժկետը գտնվում է այնպիսի անմխիթար վիճակում, որ հնարավոր չէ և անիմաստ է նորոգումը: Որոշում է կայացվել գյուղի մանկապարտեզի շենքից հատկացնել տարածք բուժկետի համար: Այս տարածքը գտնվում է անհամեմատ ավելի բարվոք վիճակում, սակայն անհրաժեշտ են որոշակի նորոգման աշխատանքներ: Այսինքն միջոցառման խնդիրը Արծվանիկ գյուղի բուժկետի ներկայիս անմխիթար և շահագործման ոչ պիտանի լինելն է: Խնդիրը լուծելու նպատակով նախատեսվում է բուժկետի համար տրամադրել նոր տարածք և նորոգել այն:

Արդյունքում կբարձրացվի բնակչությանը տրամադրվող առաջին բուժօգնության և բուժսպասարկման ծառայության մակարդակը:

Ծրագրի առաջնայնությունները սահմանվել են նկատի ունենալով համայնքում բնահպանական և առողջապահական ակնառու խնդիրների առկայությունը, ինչպես նաև՝

հաշվի առնելով համայնքի և շրջակա տարածքների վրա լեռնահանքային արդյունաբերության բացասական ազդեցությունը,

համոզված լինելով, որ հնարավոր չէ համայնքի կայուն զարգացումը առանց բնապահպանական բաղադրիչի,

գիտակցելով մարդու լիարժեք կենսագործունեության համար էկոլոգիական անվտանգության ապահովման կարևորությունը:

2010 թվականին Կապան քաղաքում «Շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանության» ծրագրով իրականացվել է «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տարածքում սեպտիկ թափոնների, թաղման փոսի և սրածայրի կառուցում: 2011-2012 թվականներին իրականացվել են Ողջի գետի մաքրման աշխատանքներ: 2013-2019թթ «Շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանության» ծրագրով իրականացվել է Կապան քաղաքի Արամ Մանուկյան փողոցի մայթի բարեկարգման, ծառերի էտման, հատման, ծառատնկման և տարածքի կանաչապատման ու վերանորոգման աշխատանքներ: Աշխատանքներն իրականացվել են ոչ միայն պետական բյուջեի, այլ նաև համայնքի բյուջեի և դոնոր կազմակերպությունների կողմից հատկացված գումարներով: 2019 թվականին մայթի բարեկարգման աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են և այն հանդիսանում է կապանցիների զբոսանքի սիրելի վայրերից մեկը, իսկ ստեղծված կանաչ տարածքները դրական ազդեցություն են ունենում մթնոլորտային օդի մաքրության վրա: 2020 թվականին, ինչպես հանրապետության այլ համայնքներում, այնպես էլ Կապանում, շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման ծրագիր չի իրականացվել:

Նախորդ տարիներին առողջապահական ծրագրերի մասով վերազինվել են համայնքի ՆՈՒՀ-երի և մարզադպրոցների բուժկետները, ինչպես նաև նախկինում լեյշմանիոզի դեպքեր արձանագրած թաղամասերում իրականացվել են աղբարկղների և օրգանական աղբի կուտակումների մշակումներ /ախտահանում/՝ երկարատև մնացորդային ազդեցության միջատասպան նյութերով: Առողջապահական միջոցառումներն իրականացվում են համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

Ծրագրի ակնկալվող արդյունքները՝

Նպատակ 1 Շրջակա միջավայրի տեղական և տարածաշրջանային աղտոտվածության դեմ պայքար

Խնդիր 1 Ջրային ռեսուրսների պահպանություն, աղտոտվածության նվազեցում

Գործողություն 1 Կապան համայնքի Կապան քաղաքով հոսող Վաչագան գետի վրա ջրավազանի կառուցում:

Արդյունք ա/ Վաչագան գետի աղտոտվածության նվազեցում:

բ/ դրական ազդեցություն՝ Վաչագան գետի կենսաբազմազանության վրա:

գ/ Քաղաքի գեղեցիկ տեսքի վերականգնում:

Խնդիր 2 Առողջապահական համակարգի հզորությունների ուժեղացում

Գործողություն 1 Կապան համայնքի Արծվանիկ գյուղի բուժկետի նորոգում:

Արդյունք ա/ կբարելավվի Արծվանիկ գյուղի բնակչությանը մատուցվող առաջին բուժօգնության և բուժսպասարկման մակարդակը:

բ/ Կբարձրանա բնակիչների առողջության պահպանմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներն ապահովող գործընթացների մակարդակը:

Իրագործման փուլերը / ժամանակացույցը/

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2021 թվականի ընթացքում՝ փետրվարից-դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում:

Իրականացման համար անհրաժեշտ ծախսերը

Բնապահպանական հարկից համայնքի բյուջե մասհանվող գումարով՝ 37 022 900 ՀՀ դրամով, նախատեսվում է կառուցել ջրավազանը: Արծվանիկի բուժկետի նորոգման աշխատանքները կիրականացվեն համայնքի բյուջեի հաշվին, կամ այլ ֆինանսական միջոցներով: Այդ աշխատանքների համար անհրաժեշտ գումարը կազմում է 7 500 000 ՀՀ դրամ: Կապան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանության 2021 թվականի ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 44 522 900 ՀՀ դրամ /կցվում է ֆինանսավորման աղբյուրները՝ աղյուսակ 1/:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ծրագրի իրականացմամբ կլուծվեն համայնքի համար կարևոր՝ Վաչագան գետի աղտոտվածության և Արծվանիկի բուժկետի նորոգման խնդիրները:

Ծրագրի իրականացումը կնպաստի համայնքի բնակչության համար մաքուր, առողջ և անվտանգ կենսամիջավայր ստեղծելուն, ինչպես նաև դրական ազդեցություն կունենա շրջակա միջավայրի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ*

Կապան համայնքի 2021թ. շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման ծրագիրի ֆինանսավորման աղբյուրները

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Ծրագրի արժեքը, ընդամենը /հազ. դրամ/	Այդ թվում ըստ ֆինանսավորման աղբյուրների՝			Ծանոթություն
			պետական բյուջե /հազ. դրամ/	տեղական բյուջե /հազ. դրամ/	այլ /հազ. դրամ/	
I	**Բնապահպանական միջոցառումներ**	37022.9	37022.9	0.0	0.0	
1	Շրջակա միջավայրի աղտոտվածության դեմ պայքար՝	37022.9	37022.9	0.0	0.0	
1.1	Կապան քաղաքի Վաչագան գետի վրա ջրավազանի կառուցում	37022.9	37022.9			
II	**Առողջապահական միջոցառումներ**	7500.00	0.00	0.00	7500.00	
1	Կապան համայնքի Արծվանիկ գյուղի բուժկետի նորոգում	7500.00			7500.0	
	ԸՆԴՀԱՆՈՒՐԸ	44522.90	37022.90	0.00	7500.00	

Աշխատակազմի քարտուղար՝ Նելլի Շահնազարյան

Հաստատում եմ
Կապան համայնքի ղեկավար
Գ. Փարսյան
14 հուլիսի 2020թ.

Կապան համայնքի 2021թվականի բնապահպանական և առողջապահական ծրագրերում ընդգրկված միջոցառումների իրականացման առաջնայնությունները, ֆինանսավորման համամասնությունները և ակնկալվող արդյունքները

N	Միջոցառման անվանումը	Գումարը /հազ. դրամ	Համամասնությունը %	Ակնկալվող արդյունքները
I	ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	37022.9	83.2	ա/ Վաչագան գետի աղտոտվածության նվազեցում: բ/ դրական ազդեցություն՝ Վաչագան գետի կենսաբազմազանության վրա: գ/ Քաղաքի գեղեցիկ տեսքի վերականգնում:
Շրջակա միջավայրի տեղական և գարաածաշրջանային աղտոտվածության դեմ պայքար՝ ջրային ռեսուրսների պահպանություն		37022.9	83.2	
1	Կապան քաղաքի Վաչագան գետի վրա ջրավազանի կառուցում	37022.9	83.2	
II	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	7500.00	16.8	ա/ կբարելավվի Արծվանիկ գյուղի բնակչությանը մատուցվող առաջին բուժօգնության և բուժսպասարկման մակարդակը: բ/ Կբարձրանա բնակիչների առողջության պահպանմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներն ապահովող գործընթացների մակարդակը:
1	Կապան համայնքի Արծվանիկ գյուղի բուժկետի նորոգում	7500.00	16.8	
ԸՆԴԱՄԵՆԸ		44522.90	100	

Համաձայնեցված է

Շրջակա միջավայրի նախարարի պարտականությունները կատարող՝

Վ. Ջիլավյան

«26» հոկտեմբեր 2020թ.

Հավելված

Կապան համայնքի 2021թ.

բնապահպանական ծրագրի

Կապան համայնքի 2021 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները

Կապան համայնքի 2021 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները

N	Միջոցառման անվանումը	Գումարը /հազ. դրամ/	Համամասնությունը %
1	ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	*37 022,9*	*100,0*
1,1	*Կապան բնակավայրում Վաչագան գետի վրա աղբոտման կանխման նպատակով ջրավազանի կառուցում և ցանցի տեղադրում*	*37 022,9*	*100,0*
2	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	*0,0*	0,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	*37022,9*	*100,0*

Համաձայնեցված է

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարար

Արսեն Թորոսյան

«01» հոկտեմբեր 2020թ.

Հավելված

«Կապան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման» 2021թ ծրագիր

Կապան համայնքի 2021 թվականի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանան ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց դիմաց ֆինանսավորման համամասնությունները

Կապան համայնքի 2021 թվականի բնապահպանական և առողջապահական ծրագրերում ընդգրկված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները

N	*Միջոցառման անվանումը*	*Գումարը /հազ. դրամ/*	*Համամասնությունը /%/*
1	*ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ*	*37022.9*	*83.2*
1.1	Շրջակա միջավայրի տեղական և տարածաշրջանային աղտոտվածության դեմ պայքար՝ Կապան քաղաքի Վայոցձոր գետի վրա ջրավազանի կառուցում	37022.9	83.2
2	*ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ*	*7500.0*	*16.8*
2.1	Կապան համայնքի Արծվանիկ գյուղի բուժկետի նորոգում	7500.0	16.8
	ԸՆԴԱՄԵՆԸ	*44522.90*	*100.0*